ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Լրագրիս [illegible] որ և է [illegible] յայտարարութիւն տպել տալ- [illegible] պէտք է վճարէ ամենայն տողի համար 1 կոպէկ:

Հրատարակւում է ամեն շաբաթ օր, [illegible] Տարեկան բաժանոր- դագրութեան գինն է 6 ռուբլի:

Զ: ՏԱՐԻ ՕԳՈՍՏՈՍԻ 10. 1863 ԱՄԻ №26.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Այժմ բոլոր Եւրոպան և Ռուսիան անհամբերութեամբ սպասում են մի վճռական յայտարարութեան, Անգլիոյ և Ֆրանսիայի կողմից, թէ արդեօք սոքա Ռուսաց Արքունիքից պատասխան ընդունելուց յետ ի՞նչ ճանապարհ բռնելու են, պարզ ասենք, այժմ ամենքը անհամբերութեամբ ուզում են իմանալ թէ Լեհաստանի խնդրին պատճառով Եւրոպայի խաղաղութիւնը պիտի շփոթվի՞, թէ ոչ: Մինչև օրս մեր ձեռը հասած օրագրերի մէջ չենք կարդում այս մասին և ոչ մի պարզ որոշմունք Լեհաստանի խնդրումը խառնուած տէրութեանց կողմից, սակայն և բոլոր օրագրերը ականջները սրած մեծ ուշադրութեամբ ամէն նշանների ետևից ման են գալիս, ամէն տեղ հոտ քաշում, որպէս զի կարող լինին օր առաջ գուշակել թէ պատերազմը ծագելու է, թէ ո՛չ: Ահա մենք էլ մեր կարդացողներին հետաքրքրութիւնը առ այժմ ուզում ենք գոհ անել քաղելով Ռուսաց և Եւրոպայեցոց լրագրերի այս խնդրոյս վերայ յառաջ բերած կարծիքները :

«Голосъ» անունով Ռուսաց լրագիրը Անգլիայի ժողովրդարանումը Լեհաստանի խնդրոյն և Ռուսի տուած պատասխանի վերայ ծագած վիճաբանութիւններից և այս առթով Հեննեսի և Հօրսմանի արած առաջարկութիւններից նիւթ քաղելով, այսպէս է սկսում խորհրդածել:

Ի՞նչ հասկացանք մենք այս վիճաբանութիւններից, ոչինչ, կամ խիստ շատ քիչ բան: Մնում էինք, որ Անգլիայի ժողովրդարանումը խօսուածները պարզացրել էին մեզ համար այժմեան գործական խնդիրը, ամենքս էլ ուզում էինք իմանալ Անգլիայի միտքը, թէ ինչ ճանապարհ բռնելու է Ռուսիայի պատասխանը ընդունելուց յետոյ, Ահա՛ այս մասին մեր յոյսը դատարկ եղաւ :

Անգլիայի գլխաւոր նախարարի բերնից դուրս եկած խօսքերը այնպէս զգուշութեամբ չափած ու ձևած էին, որ ո՛չ թէ մենք, այլ և ո՛չ բուն Անգլիացի և ո՛չ իսկ ժողովումը գտնուող նորա ունկնդիրները կարող եղան նորա խօսքերումը մի այնպիսի բառ որսալ, որոյ վերայ կարող լինէին հիմնել իրանց գուշակութիւնը, թէ Անգլիան ի՞նչ մտքի վրայ կանգնած է Ռուսի պատասխանը ընդունելուց յետոյ: Նորա խօսքերից հազիւ թէ այսքան բան իմացվեցաւ, թէ Անգլիան Ռուսիայի հետ դեսպանական բանակցութիւններ բանալով իր պարտքը կատարել է և թէ այսուհետև յետ պիտի կանգնի իր պարտքերը կատարելուց: Ազնիւ լորդը յայտնեց, թէ ինքը վստահ է, որ ժողովրդարանը չի սպասիլ, որ թագուհու կառավարութիւնը անպատճառ լոյս քցէ իր դիտաւորութիւնը, թէ ի՞նչպէս կատարելու է նա իր պարտքերը այսուհետև և կամ ի՞նչ ընթացք տալու է այսուհետև Լեհաստանի գործին: Էլ ի՞նչ ասել կուզէ, Անգլիայի ժողովրդարանը և նորա հետ էլ բոլոր Անգլիացիները այսքանով էլ գոհ կլինին: Նոքա չուզեցին և չեն էլ ուզում պահանջել, որ տէրութիւնը իրանց առաջև պարզէ այն բանը, որ դեռ ինքն էլ լաւ չէ իմանում: Լորդ Պալմերստոնը ժողովրդեան պատիւը պահելով այս էլ աւելցրեց, թէ որովհետև Անգլիան սկզբիցն իսկ Ռուսիոյ Արքունեաց հետ բանակցութիւնք բաց արաւ Ֆրանսիայի և Աւստրիայի հետ 'ի միասին անորոց և այժմ էլ պարտաւորված նոցա հետ խօսակցել, թէ արդեօ՞ք նոքա ի՞նչ ունին մտքումը դրած Պետերբուրգից եկած պատասխանների մասին ։

Ահա՛ էսքան է մեր հասկացածը Անգլիայի ժողովրդարանումը ծագած վիճաբանութիւններից ։ Ուրեմն անտարակոյս այժմ երեք տէրութեանց մէջ կատարվում է (և գուցէ այժմ արծել է) յիշեալ խորհրդակցութիւնը։... Անգլիացիները հասկանում են ինչի՞ լորդ Պալմերստոնը նոյն պահուն մէկ աւելի խօսք բերնից դուրս չփախցրեց և անտարակոյս հաւանում էլ են, որ նա խօսքը խնայելով գործ ածեց։ Նոքա հասկանում են նորա պարտաւորութիւնը, գիտեն, որ նորա բերնից դուրս եկած ամէն մի խօսքը մէկ մէկ պարտաւորութիւն է դընում կառավարութեան ուսի վերայ։ Ահա՛ սորա համար է, որ նորա այսօրինակ անորոշ և խուլ խօսքերը գին ունին անգլիացւոց առաջև, որովհետև նոցա խելքը հասնում է, որ երբ այսպէս է խօսում, ուրեմն ուրիշ կերպ խօսելը հարկաւոր չէ ։

Բայց այս էլ կայ, որ այս Անգլիացիները, որոնք այսպէս համբերութեամբ տանում են իրանց կառավարչի լռութիւնը, թէ որ ապահով չլինեն նորա իմաստութեանը, նորա հանճարոյն և նորա շնորհքի վերայ, որ նա՛ քաղաքական ծանր պարագաների մէջ էլ կարող է իր վերայ բառնալ իւր հայրենեաց բաղդի պատասխանատուութիւնը, այն ժամանակը մի րոպէ էլ չեն համբերել այսպիսի խուլ խօսքերի և հնարը կը գտնեն, որ ազատվին խօսքը թագցնող նախարարից և նորա տեղը կդնեն ուրիշին, որ իրանցից բան չծածկէ, որ աւելի շնորհք ունենայ դժուարին և վտանգաւոր գործքեր կառավարելու ։ Անգլիացիները իրանց նախարարից գանգատ չունեն, որ նա բանը պարզ չյայտնեց նորա համար, որ կասկած չունեն նորա բազմափորձ հնարագիտութեան վրայ այսպիսի դժուարանձնան քաղաքական գործքերումը։ Նոքա այնպէս համոզուած են, որ իրանք նորա ետևը, իբրև քարէ պարսպի ետև կանգնած են ապահով, համոզուած են, որ նա կառավարութեան նաւը երևելի և աներևոյթ ժայռերի և քարափների կողմը չի տանիլ։ Մէկ խօսքով Անգլիացիները հաւատում են իրանց լորդ Պալմերստոնին։ (Голосъ № 179)

«L Europe» Ֆրանսիայի լրագրի վերջին թերթերից մէկի ճակատումը հրատարակվեցաւ մի յօդուած, այս վերնագրով. Ֆրանսիայի, Անգլիայի և Աւստրիայի դրութիւնը Ռուսիայի պատասխանները ստանալուց յետոյ ։ Ահա նոյն յօդուածի խօսքերը։ Հեռագիրը իմաց արաւ, թէ ինչպէս անգլիայի նախարարներին քուն չէր գալի, երբ կարդացվում էր թագուհու մօտ իշխան Գորչակովի պատասխանը, նոյնպէս հեռագիրը իմաց արաւ, թէ նոյ պատասխանը ի՞նչ վատ տպաւորութիւն արաւ Անգլիայի արտաքին գործոց նախարարի վերայ։ Ռուսի արքունիքից հասած պատասխանը դուր չեկաւ ոչ թէ միայն Բրիտանիայի կառավարութեանը, այլ և Դրուէն Դէ Լիւիին և գրաֆ Ռեխսբերգին (Գաղղիոյ և Աւստրիոյ արտաքին գործոց նախարարները)։ Նոքա բարոն Բուդբերգի և Բալաբինի (Ռուսիայի կողմանէ Փարիզ և Վիեննա նըստող դեսպանների անունները) հետ տեսնուելիս հասկացրին, որ արեւմտեան տէրութիւնները աւելի լաւ և աւելի մեծ բանի յոյս ունէին Ս. Պետերբուրգի արքունիքից և թէ իրանք մտքներումը դրած ունին, որ մինչև վերջը հետեւին գլուխ բերելու իրանց միմեանց համաձայնութեամբ սարքած խորհուրդը, այն խորհուրդը՝ որ իրանց միաբանութեան իբրև վերջին արդիւնքը ներկայացրին Աղեքսանդր կայսեր հաւանութեանը։ Այժմ հեռագրերով խիստ արագութեամբ բանակցութիւն է լինում Ֆրանսիայի, Աւստրիայի և Անգլիայի կառավարութեանց մէջ այն դիտաւորութեամբ, որ խիստ շուտով վճռվի և մի նոր թուղթ էլ ղրկվի Պետերբուրգ երեք տէրութեանց կողմից։ Հիմի բանը պարզվում է, որ Վեննա, Լոնդոն և Փարիզ ղրկուած պատասխանները ոչ այնքան Ռուսաց կայսեր խորհրդարանի հետևած քաղաքականութեան հետևանք են, որքան Ռուսիայի ներքին դրութեան արդիւնքը։ Իշխան Գորչակովը սրանով ուզեց ցոյց տալ Ռուսաց ազգին, թէ Աղէքսանդր կայսեր կառավարութիւնը մտքումը դրել չէ խոնարհել Անգլիայի, Ֆրանսիայի և Աւստրիայի դեսպանական միջամտութեան առաջև։ Մանաւանդ որ տէրութեան ամէն բանիմաց և խոհական պաշտօնեաները, ապագայի վերայ աչք ձգելիս, հաստատ դուշակում են ծանր ծանր վտանգներ։

Ռուսաց պատասխանական ծանուցագրների պատճառով, դեսպանագիտական բանակցութիւններին վերաբերեալ տեղեկութիւններ շատ կան, միայն մենք կաշխատենք հաղորդել նրանց քաղուածօրէն և միևնոյն ժամանակ պարտք ենք համարում ասել, որ նոցա աղբիւրները կասկածաւոր են, ուրեմն, և մի քանի հիմնաւոր իրողութիւնների մէջ, կարող են պատահել և շատ այնպիսիներ, որոնք կասկածելի են, հիմնված լինելով միայն կարծիքների, զանազան դուշակութիւնների, համբաւների և հնարած անցքերի վերայ։ Դեսպանագիտական կեանքի և գործունէութեան գլխաւոր կենդրոնը այժմ Փարիզն է ։ Դրուէն-դը-Լիւի նախարարը սաստիկ ընդնաւորած է աշխատանքով. նորա ջանքն այն է, որ կայանայ հաստատուն համաձայնութիւն երեք տէրութիւնների մէջ։ Նա արդէն կազմել է պատասխանական ծանուցագրի նախագիծը, որ նոր քննել է է նախարարների խորհրդարանում: Ասում են, թէ այս ծանուցագրի հառաջնիքն է համառօտութիւնը և ծանրակշռութիւնը: Նորա մէջ, ինչպէս ասւում է, այն վեց հատուածները, իբրև անհրաժեշտ պայմաններ, որոնց հիման վերայ միայն կարող է վճռւել Լեհաստանի խնդիրը, Եւրոպայի շահին և օգտին համեմատ: Ծանուցագիրը չունի բանակցութեանց վերաբննական թղթի ձև, միայն այնու ամենայնիւ նա վերջ կտայ ամէն բանակցութեանց—Ռուսաստանի հետ, եթէ սա շուտով համառօտ պատասխան չի տալ նրան, Եւրոպայի ցանկութեանը համաձայն: Ծանուցագրի մէջ յայտնած կ'լինի, թէ այնուհետև երեք մեծ տէրութիւնները իրանց գործողութեանցը Լեհաստանի հարցի մասին, այնպիսի ընթացք կ'տան, որնոր կ'պահանջէ միայն Եւրոպայի օգուտն, որնոր շատ վնաս է կրում Լեհաստանի մէջ եղած խռովութիւններից: Բայց այն հերիք չէ Ֆրանսիայի համար, որ ինքն խրկէ Ռուսաց դրանը այնպիսի ծանուցագիր և աշխատում է, որ միւս երկու մեծ տէրութիւններն էլ խրկեն ծանուցագիրներ նոյն բովանդակութեամբ: Ինչպէս լսւում է, Անգլիան ամէն բանում համաձայն է Ֆրանսիայի հետ: Բայց Աւստրիան որի ծառայութեան և օգնութեանը շատ կարօտ է զգում իրան Լուդովիկ Նապոլէոնը, այս բանումն էլ երևում է նրան մեծ արգելք և խոչընդոտն է նա ընդդիմաբանութիւններ է անում Ֆրանսիայի նախագծի դէմ, Աւստրիան չէ կամենում տալ իր պատասխանին այն ձևը և եղանակը, որով պէտք է փակվի առաջիկայ բանակցութեան դուռը Ռուսաստանի հետ:

Մի Ֆրանսիացի լրագիր, որից գլխաւորաբար քաղում ենք այս տեղեկութիւնները, հաղորդում է, թէ բացի դրանից երեք տէրութիւնները, իրանց մէջ Լեհաստանի գործքերի մասին եղած համաձայնութեանը աւելի հաստատութիւն տալու համար, դիտաւորութիւն ունեն ստորագրելու մի պայմանագիր էլ: Միայն չգիտենք, մինչև ո՞ր աստիճան կլինի Անգլիայի համաձայնութիւնը այս մասին, ըստ որում նորա գրութեանը մի կերպ սահման կ'դնվի այս պայմանագրութեամբ:

«Indépendance Belge» լրագրի Փարիզի թղթակիցը իբրև լուր հաղորդում է, թէ նախարարների ժողովի վերջին նիստումը Դրուէն դը-Լիւյսն կարդացել էր Ռուսաց վերջին ծանուցագրի պատասխանական գրութիւնը և Պ. Շասլու-Լոբան, որնոր զինուորական նախարարի պաշտօն է կատարում, կամեցել է քանի մի ծանօթութիւններ անել այս գրութիւնների վերայ, միայն նրան արգելել է Եւգինեա կայսրուհին, որնոր, կայսեր բացակայութեան պատճառաւ, նախագահ է եղել յիշեալ խորհրդարանում

«Հարցին վճռական վախճան տալը, ասում է նա, կայսեր իրան կ'պատկանի»: Կայսրուհին այժմ Վիշիումն է: Ասում են թէ, նա գնացել է այն տեղ զբաղած կայսրին հանգստացնելու համար: Կայսրուհին վախենում է պատերազմից և նորայ հետևանքից, դիտաւորութիւն ունի ազդելու կայսեր վերայ, յօգուտ խաղաղասիրութեան:

Փարիզի մէջ համբաւ է տարածուած, որ Ֆրանսիական նաւատորմիղի մի մասին հրամայած է պատրաստ դանվելու, որ Վեննայի առաջարկութեամբ ծովը դուրս գայ: Բայց թէ ո՞ւր պէտք է երթայ, այդ ոչ ոք չգիտէ: Սորա հետ միասին տարածված է և մի ուրիշ համբաւ, որնոր նոյնպէս կրում է պատերազմական կերպարանք: Խօսում էին իբրև թէ, արդեանց նախարարը, Ֆուլդը, որնոր խաղաղութեան մեծ կուսակից էր, այս օրերումս արձակուրդ է ստացել:

Ֆրանսիացի լրագիրների կարծիքը Լեհաստանի հարցի դիպլոմատիքական դրութեան վերայ

Լորդ Ռէսլլի ծանուցագիրը, որնոր նա խրկել էր իր կառավարութեանը, այս տեղ մեծ տպաւորութիւն արաւ: Նրանից մակաբերում են, որ Ռուսաստանի կողմից ոչինչ զիջումն չէ կարելի սպասել: Այս ծանուցագիրը մեկնում է, թէ ինչո՞ւ երեք մեծ տէրութիւնները չեն կամենում էլ մի ծանուցագրից աւելի գրութիւն ուղղելու Ռուսաց կառավարութեան, և եթէ այս էլ ոչ մի ելք չունենայ, բոլորովին պէտք է կտրեն իրանց բանակցութիւնները: Ռուսաստանի և Ֆրանսիայի յարաբերութիւնների աւելի և աւելի վատանալու ապացոյց կարող է լինել Պ. Պոլին Լեմէյրակի յօդուածը, որով նա սաստիկ յարձակւում է իշխան Գորչակովի պատասխանի վերայ: «Լեհաստանի հարցը այժմ աւելի Եւրոպական խնդրի կերպարանք ունի, քան թէ 1831-ին կամ երբ և իցէ ունեցել է, ուստի և Ռուսաց արքունիքի առաջ բերած պատճառները, Ռուսաստանի, Աւստրիայի և Պրուսիայի կազմելու ժողովի մասին, Լեհաստանի բարեկարգութեանը համար, չեն կարող միջնորդող մեծ տէրութիւնները ընդունել»: Մի ուրիշ Ֆրանսիացի լրագիր ցրում է նրանց Վեննայի դաշնադրութեան յօդուածների զօրութեամբ, ուստի և, ասում է նա, այն պատճառները մինչև անգամ քննութեան տակ ընկնիլ չեն կարող, մանաւանդ Աւստրիայի կողմից բացարձակ մերժումն ստանալից յետոյ:

«Temps» լրագրի մէջ պահանջում են, որ Լեհաստանը պատերազմող երկիր ճանաչվի. Ֆրանսիան առաջինը պէտք է օրինակ տայ այս բանին: Իրանք Լեհերը դեռ ևս չեն պահանջում զինուորած միջնորդութիւն, այլ կամենում են, որ նրանց մատակարարվին միայն դեռ զէնք և պատերազմական պաշարներ, և չարգելվի իրանց հետ մտնելու նրանց, որոնք կամայ կ'գան Եւրոպայից նըրանց օգնելու համար:

Ժիրարդէնը համեմատում է Ռուսաստանից պահանջած վեց հատուածները այն չորս հատուածների հետ, որոնք Ֆրանսիան տասնըչորս տարի պահանջում էր Պապի կառավարութիւնից: «Ինչո՞ւ են զզվում Ռուսաստանի մերժումից, ասում է նա այն ինչ պապի մերժումրառնից հետեւանքի մնաց: Իտալացիք ոչ ոքի միջնորդութիւնը չեն պահանջում. այլ միայն որ Ֆրանսիայի զօրքերը թողնեն Հռոմը. բայց Ֆրանսիան էլի շարունակում է պաշտպանել պապին, չ'նայելով, որ սա բոլորովին հակառակ է որ և իցէ վերանորոգութեան (Реформъ):

Բրեսլաւի լրագրին գրում են Վիեննայից. «Այժմ Աւստրիան նոյնպէս սկսում է զինուորվել: Վիեննայում վճռած է արդէն, որ Գալիցիա երեք բանակ խրկվի, ընդամէնը 90,000 հոգի: Շատ կարելի է, որ Գալիցիան զինուորական դրութեան մէջ դրվի: Եթէ այս այսպէս կ'լինի, աշկարայ է որ Աւստրիան կամենում է ծածկել այս անունով իր պատերազմական պատրաստութիւնները Ռուսաստանի դէմ:

Ֆրանսիացիների կայսրը Օգոստոսի սկզբին Վիշիից դուրս գալիս է և գնում է Շալոն, ուր բանակած են զօրքերը

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹԻՖԼԻԶԻ

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԸ

Մեր լուսահոգի Ներսէս կաթուղիկոսը 1822 թըւին Թիֆլիզումն իր առաջնորդութեան ժամանակը հաստատել է Ներսիսեան Հոգեւոր Դպրոցը, որնոր հիմի կոչւում է Թիֆլիզի Ներսիսեան Հոգեւոր Ազգային Դըպրոց: Նշանակել է նա թէ իր առաջնորդութեան ու թէ յետոյ իր կաթուղիկոսութեան ժամանակներումն էն Դպրոցի օրինաւոր կերպով կառավարուելու համար աղբիւրներ, որոնցով կառավարուել է ու հիմի էլ կառավարւում է մեր ժողովրդի կամաւոր նուէրներով: Վեհափառ հիմնադրի դիտաւորութիւնն էլել է մեր ազգի համար արժանաւոր եկեղեցական պաշտօնեայք պատրաստել, որոնք որ քիչ քիչ շատանալով, բռնել էին հիմիկուան մեր եկեղեցականների տեղերը: Ցանկութիւնը շատ ազնիւ ցանկութիւն է, բայց մեզ համար աւելի ցանկալի կ'լինէր էդ նպատակի գոնեայ կիսին հասնելը: Բայց յայտնի բան է, որ ամէն բան միասին անկարելի է անել: Սրանից 40 տարի առաջ ցանկութիւն էր, դիտաւորութիւն էր, հիմի չէ ու մէկ էլի էնքան ժամանակից յետոյ կըլինի էն դիտաւորութեան բոլորովին հասնելը, ցանկութեան կատարուիլը: Ո՛չ մէկ մեծ գործ, որոնցից մէկն էլ ուսումնարանի գործն է, չի կարող յանկարծ առաջանայ ու հէնց որ շուտով էլ յառաջանայ, կըլինի անհիմն, փոփոխական ու կարճ օրուայ: Ամէն մեծ նպատակին մեծ դժուարութիւններով էլ հասել են ուրիշները, մենք էլ պէտք է փորձենք միւնոյնը: Թող երկու անգամ 40 տարի քաշէ, թող էլի աւելի փորձուինք, միայն թէ էն նպատակին հասնենք, որ ցանկանում ենք բոլորս:

Յայտնի բան է, որ արժանաւոր եկեղեցականներ պատրաստելու համար, Ներսիսեան դպրոցը պէտք է տայ իր աշակերտներին էն ուսումն, ինչ որ հարկաւոր է քարոզող, սովեցնող, խրատող ու ժողովրդին լաւ օրինակ ցոյց տուող քահանային ու վարդապետին: Ժողովրդին քարոզելու, սովեցնելու ու խրատելու համար հարկաւոր է որ էնտեղ ուսումն առած աշակերտներն էնպիսի մարդիկ դառնան, որ հասկանում ըլնին մեր ժողովրդի ամէն կարիքները, գիտենան նրանց լաւացնելու հնարքներն ու միեւնոյն ժամանակը նրանց հետ ըլնին մէկ, նրանց մտքի ու նրանց սրտումը բնակուող: Ի՞նչ պէտք է սովորեցնես ժողովրդին, երբ որ չես գիտենայ, թէ ի՞նչ է հարկաւոր նրան սովորցնելու. ի՞նչ կըխրատես, երբ որ նրանց նստել վերկենալու ու տան բաները չես գիտենայ, չես գիտենայ թէ ի՞նչ ունին պակաս ու աւելի: Լաւ եկեղեցական ըլնելու համար հարկաւոր է, որ մարդ լաւ գիտենայ մարդկերանց բնութիւնը ու լաւ հասկանայ նրանց պակասութիւնները: Եկեղեցական դառնող մարդն առաջ պէտք է հասարակ մարդու ամէն բաները փորձայ ունենայ ինքն իր աչքով տեսած ու ականջով իմացած, որ յետոյ կարողանայ էն հովիւը դառնայ նրանց համար, որնոր հարկաւոր է: Հիմիկուայ մեր գիտուն, իմաստուն աստղ եկեղեցականն ի՞նչ կարող է անել, երբ նրա գիտեցածը միայն իսրայէլացւոց ազգի ու կռապաշտների պատմութիւնն է ու չէ թէ մեր քրիստոնեայ ժողովրդինը: Ի՞նչ պէտք է սովրի ժողովուրդը մեր հիմիկուան քահանաներից, որոնք որ նրանց սրտի ուզելիքները չեն կարդացել մէկ մէկ սրտի ու մտքի աչքերով: Ամէն բանով կատարեալ մարդ պէտք է ըլնի եկեղեցականը, շատ բան գիտացող ու ամէն բանից աւելի իր ժողովրդի ցաւերն հասկացող ու նրանց համար հոգս անող:

Ներսիսեան դպրոցն իր հաստատուելու օրից, 1822 թուից մինչև 1861 թիւը շատ տեսակ տեսակ բաբաներ է փորձել, շատ մարդիկ փոխել ու աշակերտներ ճանապարհ դցել: բայց կարողացա՞ւ նա էն եկեղեցական պաշտօնեաները տալ, որ հարկաւոր էին մեզ: Էդքան տարուայ մէջ միայն երեք տարի 1852—1855 ի վերջը Ներսիսեան Դպրոցն իր Տեսուչ Գ. Պետրոս Շանշիանցի շնորհքով նմանեցաւ մի քիչ էն բանին, ինչ որ պէտք է ըլնէր. ժամանակով կընմանէր էլ բոլորովին, եթէ մեր ազգը չէր անել նրան թէ. «սեւ փող է, պարոն, գնա, հարկաւոր չես, յարմար չես, թող էլի մեր վաղուցուանները դան ու հանգարտ օրօրեն մեր ուսումնարանի օրօրոցը, լաւ հանգիստ քնելու համար քաղցր նանա անելով մեզ, էգպէս յանկարծ առաջ գնալ չի ըլնի» Միայն Շանշեանցի նստել վերկենալը, նրա շարժուածքը, նրա վարքն ու բարքն էլ էր բաւական, որ աշակերտները կատարեալ սովորել էին եկեղեցական մարդուն հարկաւոր բաները: Քարոզն էնքան չէ, ինչքան լաւ օրինակը հաստատ ազդում է մարդու մտքումը: Դու գողութիւն անես եկեղեցումդ ու ժողովրդին քարոզես յետոյ թէ «սիրելիք, գողութիւնը մահացու մեղք է, մի գողանաք»—բան կըդառնայ էդուրմ—իսկի ոչինչ : Միայն Շանշեանցի ժամանակին է էլել, որ աշակերտները դաստիարակուել էլեն ու չէ թէ միայն «բառ բառի, գործեմ, գործես, գործէ» սովորել: Միայն էն ժամանակին էնտեղի աշակերտները սովորել մեր եկեղեցւոյ ուսումը, ճանաչել նրա հոգին, բնաւորութիւնն ու չէ թէ հիմիկուայ պէս միայն էնթէ ի՞նչ է հաւատը, յոյսը, սէրը ու սրանց վկայութիւնները: Միայն էն ժամանակն է սովորել աշակերտն իր հայութիւնն ու ժողովրդին սիրելը :

Մեր Մատթէոս կաթուղիկոսի էստեղ գալուց յետոյ 1861 թուից մինչև հիմի Ներսիսեան Հոգևոր դպրոցը նոր ընտրած հոգաբարձուների ձեռքով է կառավարւում: Գրուեցաւ կարգ ու կանոն, նշանակուեցան սովորցնելու առարկէքն ու սկսուեցաւ ուսումը: Էս ուսումի պտուղները մենք խնդութեամբ տեսանք էս տարուայ Մայիսի 21-ից սկսած մինչև Յունիսի 13-ն էլած հարցաքննութիւններումը :

Ներսիսեան ուսումնարանումն ինչ առարկէք և ինչքան սովորցնելու վրայ խօսելուց առաջ, հարկաւոր է որոշել, թէ ի՞նչ ուղղութիւն ունի դա, դէպ 'ի ո՞ւր է տանում մեր զաւակներին: Պէտք է առաջ գիտենալ ուր գնալը, որ յետոյ աշխատենք էնտեղ հասնելու աւելի մօտիկ, աւելի լաւ ճանապարհը գտնել : Էս դպրոցի գլխաւոր նպատակն էլել է միշտ, նմանապէս և հիմի եկեղեցւոյ ուսում տալ աշակերտներին, որ յետոյ կարողանան նրանք լաւ հովիւներ դառնալ մեզ համար : Բայց թէ որ աստիճան հասել է ուսումնարանն էս նպատակին — տեսնում ենք բոլորս :

Ինչպէս առաջ էլ ասացինք, լաւ եկեղեցական ըլնելու համար պէտք է ըլնել լաւ աշխարհական, լաւ մեծութիւննա կարող է անել, ովոր լաւ փոքրութիւն է արել, լաւ հրամանքներ տալու նա կը դառնայ, ովոր լաւ հրամանքներ կատարող է էլել, լաւ նա կը սովորցնէ ժողովրդին, ովոր լաւ սովորել է ժողովրդից : Ուրեմն, ինչպէս երևում է, եկեղեցական դառնող մարդու համար ամենից մեծ ուսումն ու գիտութիւնն իր ժողովրդի գիտեցածի գիտենալն է: Դեռ թող սովրի նա էն բաներն, ինչ որ գիտէ ժողովուրդը, նրանից յետոյ կամ նրա հետ միասին, միևնոյն ժամանակը պէտք է ուսումն առնէ նա —էն բաները սովրի, որ հարկաւոր է ժողովրդի դրստելու, խրատելու, նրանց սրտումը քրիստոնէական ուսումն ու ազգասիրական զգացմունքներն արմատացնելու :

Կարո՞ղ են սովորող երեխէքը ժողովրդի կեանքին տեղեկանալ, երբ որ իրանք 60, 70 հոգի միասին կողպած են մեր դպրոցի պատերի մէջ: Որդեգիրների վրայ է խօսքս : Իսկ ժողովրդի կեանքից շատ հեռու են նրանք, ուրեմն և մեր ասած ժողովրդական ուսումը չեն առնում հիմիկուան որդեգիրները : Մեր կարծիքով ամենահարկաւոր բան է մեր Ներսիսեան դպրոցի համար որդեգիրներ չունենալը : Կասեք, դըժուար է, ի՞նչպէս կարելի է: Բայց մենք կ'ասենք, թող դժուար ըլնի, դժուարն էլի կարելի է ինչպէս ըլ՛ր հեշտացնել, բայց ամենադժուարը և բոլորովին անկարելի կըլնի յետոյ էն որդեգիրների պակասութիւնների ղըրտելը, որ ունենում են հիմի ուսումն աւարտելուց և եկեղեցական դառնալուց յետոյ : Բոլոր աշակերտները թող երթևեկ ըլնին, չորս հինգ սահաթ ուսումնարանումը սովրին, բայց երկու էնքան ժամանակ իրանց տանը՝ բարեկամներից, մեծերից ու փոքրերից : Մեր տարաբաղդութիւնից էս ուսումնարանի ուսումն էլ էն ձևով է, որ բոլորովին հեռացնում է մեր զաւակներին ժողովրդի իսկական կեանքից, էնպէս վերացական կերպով վերացական բաներ է կարդում նրանց համար վարժապետը, որ աշակերտի միտքը միայն էգպիսի բաներ ըմբռնելու ընդունակութիւն է ստանում. հասարակ բաները, մեր տանու գործքերը ոչինչ նշանակութիւն չունին նրանց աչքումը, չեն զգում էդ բաներն, էնդուր որ մէկը չըկայ, որ զգալ տայ նրանց էդ բաների իսկական արժանաւորութիւնը: Ասացինք վերացական —այո ինքն սխոլաստիկական է էս ուսումնարանի տուած ուսումը: Էդ կերպի ուսումն ուրիշ ազգերը քանի դար առաջ թողել են բոլորովին, բայց միայն մենք հայերս ղայիմ բռնած ունինք մեր ձեռներումը, սիրում ենք էնպէս, ինչպէս մեր ուրիշ հին ու մին բաները : Բերում ենք հին վարժապետներ, էնպիսի վարժապետներ, որոնց վարժապետները 17-դ ու 18-դ դարու մարդիկ դն էլել: Ի՞նչ կըլնի նրանց տուած ուսումը հիմի մեր երևելոնցը — յայտնի բան է իրանց ճարտասանութիւնն ու տրամաբանութիւնը ։ Կրօնք պէտք է վարժապետներ, չարժողութիւն է հարկաւոր աշակերտներին, (բայց ի՞նչ անեսոր էդ վարժապետներին աւելի սիրով են հրաւիրում դաս տալու) քչել պէտք է էդպիսի վարժապետներին հողաբարձունե՛ր, ձեզ քնարից ազգն իբրև նոր մարդիկ, որ ամէն հին ու վնասակար մարդկերանցը հեռացնէք դաստիարակութեան ու վարժապետութեան սուրբ պաշտոններից։ Բա՞ս ինչի՞ էլի անարժանները տեղ ունին մեր ուսումնարանումը, ինչի՞ էնպէսները են վարժապետի պաշտօնումը, որոնք որ օրինաւոր աշակերտութիւն չեն արել, որոնք որ բոլորովին չեն հասկանում իրանց պաշտօնի ինչ ըլնելը. փող աշխատելու ճանապարհ է դառել հիմի վարժապետութիւնն էլ էնպէսների համար, որոնք ուրիշ կերպով ապրել բոլորովին չեն կարող աշխարհիս մէջ ։ Կասեք թէ չկան դրանցից լաւ վարժապետներ։ Սխալւում էք պարոններ, կան և դրանցից շատ լաւերը, բայց նրանք չեն կամենալ ձեր վարժապետների կարգումը համարուիլ, որոնցով լքցուած է հիմի մեր ազգային ուսումնարանը —վարժապետների աղքատանոցը։ Վերջապէս ժամանակ է պատուելի հողաբարձունե՛ր, որ գործ գործէք մեր ուսումնարանի լաւացնելու, էնպէս լաւացնելու որ կասեն թէ, որ մարդ մանի մէջը, ասը չըկարէ —ի՞նչ է ձեր ու մեր ուսումնարանի վիճակը մէկ լաւ, ակնոցներով մտիկ արէ՞ք . . .

Տեսնենք հիմիկուայ աշակերտների ստացած ուսումն ի՞նչքան յարմարութիւն ունի եկեղեցական մարդ շինելու համար ։

Սովորել են նրանք առաջին դասատանը՝ Սրբազան պատմութիւն, երկրորդումը՝ Քրիստոնէական վարդապետութեան սկզբունքները, երրորդումը՝ աւելի ընդարձակ սրբազան պատմութիւն ու քրիստոնէական վարդապետութիւն և չորրորդումը՝ էնդուրից էլ աւելի ընդարձակ քրիստոնէական վարդապետութիւն, բայց էս բոլորը մէկ էնպէս ձևով են սովորել, անգիր արածի պէս, որ էս տարի գիտեն, միւս տարի կամ քիչ յետոյ կ'ներթայ բոլոր սորվածն էլի էնտեղ, որտեղից որ դուրս էր եկել ։

Սրբազան պատմութիւնը, եթէ պէտք է հասկանանք լոկ պատմութիւններ ու առակներ զանազան լաւ ու վատ մարդկերանց, սովորել են բաւական լաւ, բայց ամէն մէկ անցքի, ամէն մէկ բառի ու տառի ներքին հոգին, որ մենք ասում ենք մեկնութիւն, բացատրութիւն, բարձր դասատան աշակերտներն էլ չեն մինչև անգամ հոտն առել ։ Սրբազան պատմութիւնը, հին կտակարանը մէկ որևիցէ ազգի պատմութիւն չէ, նա է Աստուծոյ պատմութիւն, Տիրոջ հրամանքների ու օրէնքների գիրքն է, մարդկային բարոյական ուսման ուղեցոյցն է նա ու առաջնորդը ։ Գնա մարդկային օրէնքներն էլ չեն կարողանում հասկանալ ամէնքը, ո՞ւր մնաց Աստուծունը ։ Աստուծոյ օրէնքների միտքը հասկանալու համար պէտք է ըլնին Աստուածանման մարդիկ, որ կարողանան բացատրել ու սովորցնել ժողովրդին։ Ղո՞րդ է որ քրիստոնէութեան առաջին դարերի հայրապետները էնպիսի մարդիկ են էլել, հասկացել են էդ գիրքը, մեկնել, բացատրել հատորներով գրքեր շինել ու թողել մեզ համար ։ Եթէ չունինք մենք հիմի Աստուածանման մարդիկ, ունինք գոնեա նրանց գրածները, թող կրօնուսոյցը սովորի ու սովորցնէ աշակերտներին։ Հին կտակարանի բարոյական վարդապետութիւններն են, որոնցով անուշ կ'առնէ մարդու սիրտը, կը մեղմանայ, կըմաքրուի ու Աստուծոյ պարզութեանը կը մօտ կենայ։ Բարոյական փիլիսոփայութիւն է պարունակում սուրբ գիրքը, բայց մեր ուսումնարանի համար միայն առակների ու հեքիաթների գիրք է դառել . . .

Քրիստոնէական հաւատի դաս տալը աւելի վատ վիճակումն է էս ուսումնարանումը, քան թէ սրբազան պատմութեան դաս տալը ։ Սովորել են աշակերտները թէ ի՞նչ է Աստուած, ի՞նչ է Աստուծոյ անունը, ի՞նչ է եկեղեցին, սէրը, յոյսը, մեղքերն ու ուրիշ էս տեսակ բաներն իրանց վկայութիւններով ։

Աստուծոյ անունը որ գիտեցայ, հենց էն է Աստուածաբան կըդառնա՞մ ու Աստուծոյ օրէնքների գիտացո՞ղ։ Երբ որ աշակերտին հարցրին քննութեան ժամանակը «Աստուծոյ անունն ի՞նչ է» մէկը թէ «սխրաթըլէք, օ՞վ է կընքի, կօսէ, նրանն վար անում ունենայ»։ Էսպէս բաներով աշակերտը չի հասկանայ բոլորովին քրիստոնէական վարդապետութեան հոգին ։ Թէպէտ Հրահանգներն ու Ուղեցոյցներն էլ հարկաւոր է դաս տալու համար, բայց աւելի հարկաւորն է քրիստոնէական ուսման իսկական աղբիւրը —Աւետարանը, որի վրայ հիմնած է մեր կրօնը ։ Բայց մեր տարաբաղդութիւնից էս սուրբ գիրքը, նոր կտակարանը, մեր մեծ կրօնուսոյցի պատմութիւնն ու վարդապետութիւնը շատ անկանոն է գործածւում Ներսիսեան ուսումնարանումը ։ Առաջին դասատանը միայն կարդացւում է աւետարան հայոց լեզուի վարժապետը, միւս դասատուներումն էլ դասագիրք չէ նա ։ Աւետարանն ուրեմն սովորում են աշակերտները միայն լեզուի ու ոճերի համար —վատ չէ դրանց արածը —աւետարանն, իբրև պարզ գրաբարի ամենալընտիր օրինակ, արժանի է և լեզուի դասագիրք լինելու, —բայց թէ էդ չէ միայն աւետարանի նշանակութիւնը քրիստոնէի համար ։ Աւետարանի հոգին ու նրա ամէն մէկ բառի մեկնութիւնն է հարկաւոր գիտենալու էն աշակերտին, որ ժամանակով պէտք է ժողովրդի քարոզող ըլնի։ Ինչպէս հեշտ է թւում աւետարածի հասկանալը առաջին անգամ, հարիւր և հազար անգամ դժուար է գտնում նա մանրամասն քննողի համար :

Ընդհանուր եկեղեցական պատմութիւնն ու մանաւանդ մեր Հայոց Եկեղեցւոյ պատմութիւնը բոլորովին չեն դաս տուել աշակերտներին : Մանաւանդ մեր Եկեղեցւոյ պատմութիւնն անպատճառ հարկաւոր է մեր եկեղեցւոյ պաշտօնեայի համար : Եկեղեցւոյ սուրբ հայրերի, հայրապետների, առաջնորդների ու վարդապետների կեանքը միայն բաւական է զինել եկեղեցական մարդու համար, որ նրանց արած գործքերն ու վարքն ու բարքը մէկ հայելի դառնայ նրա սրտումն ու աւելի ազդու կերպով հասկացնէ հոգւոյն Քրիստոսի օրէնքների կատարելու ձևը, քրիստոնէավայել կեանքի վարելն ու Աստուծուն դուրեկան ըլնելը : Ձեռնարկութիւն կամ դասագիրք ասած բան Եկեղեցական պատմութեան սովորցնելու համար չունինք, բայց մեր կրօնուսոյցը շատ նիւթեր կարող է ժողովել մեր սուրբ հայրապետների գրուածքներից :

ԶԲՕՍԱՐԱՆ

Հաու շկոլի էգզամէնները, ինչիր տեսայ իս էնդի, աշկերտներու բանիրն ու մէ քանի վարժապետներու տարամունքները, քաղաքավարութին խակի սովերցնում մեր Հաու շկոլում ը, թէ չէ, էֆէնդիեվի փողերու դուս գալը :

Իս տարի Մաիսին Հայու շկոլումը էգզամէննիր էր: Վուր կօսին ամէն էգզամինին էնդի էլի ըլում, ամա մէ գամ չէլաւ վուր մէր ամէն հօքեբարցներուն մէջտի տեսիլ էի էնդի, էրկու գամ իրեք չուրս հօքեբարցնիր համգիբեցան էնդի, թէչէ մէկէլ վախտիրն ան մէկն էր ըլում, ան էրկուսը, էնէնց խալխ էլ շատ քիչ էր գալի էնդի։ Երևում է, վուր ջէր էլի շատ քիչն է փիքր անում ասկլի գործկերու համա, շատն է շատ խօսող ու շատ քիչը բան շինող: Բանի վախտը գիժունքն է մէջտի փախչում ին, մարթու աչկին էլ չին էրևում:

Ասինք իս էնդի էի, մէ քանի բանիր աչկումըս նըշանգաւ ու կօսիմ, կու խօսիմ, վուր գիտունք իմանան ու թէ կանանչ իմքնով դըրստին պակաս բանիրը. —շատը վուր էկիլ էին, շատ բան էլ կու տեսնէին: Ասածն ու յիտ պատմածն էնէնց չէ ըլում մարթու համա պարզ, վունցոր աչկով տեսածը :

Ամէն կլասներումը, ուփրօ մէկումն ու էրկուսումը շատ մի մինձ աշկերտնիր կէին: Օրինակ ասինք, 10, 12 տարեկան էրեխանց յիտ նըստած էին 20, 22 տարեկան մարթիք : Իս շատ վատ բան է : Ան վո՞նց ին նօլա գընում մէկըմէկու յիտ : Իս էնդումէն է, վուր Հաու շկոլումը, կօսէ, աշկերտի տարուն չին մըտիկ տալի, օվոր գուզէ ըլի, քանի տարեկան էլ վուր ըլի, վէր ին կալնում. սորվիլ դուզէ, թող սորվի, կօսէ : Շատ լաւ բան է, վուր օչովի սորվելու ճամփէն չէ կապում Հաու շկոլն. ամմա մէ քիչ էլ բանին պիտին մըտիկ տայ: Վունցոր մէ փըլթած խընձուր գըցիս մէ քըլթուց լաւ խընձուրումն ու դիփ խարաբ կուլի, էնէնց էլ դրանց բանն է : Պիտին չալիշ դայ հօքեբարցնիրը մէ թաձար ռադ անին էտ մինձ աշկերտներուն :

Մէ էգզամինի վախտը մէ մարթ կարտիր ձեռի փեշքաշ: Էտի էնդունք ու մնո. պիտէր տայ ու խընդրից, թէ, կօսէ, հօրնայ էն պատի վրայ քաշ արէք : Շկոլի մինձերեմէն մէկը հարցըրուց թէ, վո՞ւր տարվանն է : Մէկէլը տընդըլից ու քըմքածիծաղ անելով թէ, 1824 թարիղինն է, շատ հին է, էլ ինչի՞ պէտքն է: Էն մարթու սըրտին շատ դիպաւ էս բանը, վուր չէլաւ, ասաւ նրանցը թէ, իս ձէզ փեշքաշ իմ անում, վուր թարիղին էլ տըպած է, տըպած է, ձիզ ի՞նչ. փեշքաշ ձիու ակռըքնիրը չին տընտղի : Իժում էն մինձը թէ, «Чтожъ, возьмите, будемъ хранить въ архивѣ»: Ցուրմէ էն մարթը ռուսիվար էլ է գիդացի լաւ իմացաւ, ամմա էլ վունչիչ չասաւ: Մօտ կէս սահաթ էսոտու խօսելումն էին շկոլի մինձիրն ու իսկի չէին մըտիկ տալի, թէ էնդի աշկերտներուն էգզամինայ ին անում : Ան ի՞նչ լաքլաք անելու բան է նրանց համա էնդու համա խօսիլըք բերիլ է էտ մարթը փեշքաշ. հին է, թէ նուր, շնորհակալութենով պիտիք վիկալնի. էլ դալմաղալ սարքելն ու մարթուն բեզամաղ անիլն ի՞նչ է: Լաւ չէ, էտէնցութենով էն բերողներու սիրտը կու կոտրվի, լաւ չըլի :

Պըստի վարժապետներեմէն մէկը էգզամինի վախտը նըստում էր մէ քինջնումն ու թաքուն գըլխով ու ձեռով էր անում աշկերտին : Թէ դրուստ էր ասում աշկերտը խոմ գըլխով էր անում, թէ չէ ու գըլուխը ժաժ էր տալի, միթամ թէ ծուռն իս ասում, կօսէ : Էն չէր հարցընում նա, վուր շատը տեսնում էր նըրան, ամմա նա էլի իրանն էր անում : Մէ մէ վախտ էլ էնէնց էր ըլում, վուր աշկերտը դրուստն էր ասում, նա էլի գըլուխը ժաժ էր տալի, թէ էտէնց չէ, էրեվում էր ինքը վարժապետն էլ լաւ է գիդացի աշկերտի ասելու բանիրը —աշկերտը խառնըվում էր, շըշկըլվում էր ու վուր կօսին ջօրին կորցընում էր, դրուստ նրանց բանն էր դառնում : Լաւ բան չէ, պարուն վարժապետ: Էգզամինն էնդու համա է, վուր իմանանք թէ ինչքան գիդին աշկերտնիրը, վարժապետներու գիդեցածի չափելու համա խոմ չէ էգզամինը :

Մէ էրկու էգզամինի վախտն իր վարժապետն ան մատով էր նըշան անում աշկերտին, ան էն թաձարն էր հարցնում, վուր էլ ջուղաբ տալու իմքին չէր մընում :

Մէ էգզամինի վախտը մէ ղոնաղ ոլած մարթ հարցըրուց տշկըրտին թէ, «մինչեւ վերջին դատաստան անելը մարդկերանց հոգիքն ի՞նչ տեղ կըլինին»: Վարժապետը թէ, «առաջ իմացիր պարոն թէ ի՞նչ են սովորել աշակերտներս, յետոյ այնպէս հարցրու նոցա. ո՞ւր ես չարչարում ՚ի զուր ինձ էլ, սոցա էլ. լաւ գիտես պատասխանատուր ինքդ, տեսնեմ ի՞նչպէս ես ասում»: Էն մարթը թէ «ներեցէք, վարժապետ, ես էդպէս չէի իմանում, թէ բանն էդպէս է. մեղայ Աստուծոյ էլ չեմ հարցնի»:

Բանն էն խօմ չէ, վոր մենակ կարթալ գրել սորվի աշկերտը, կարթալու յետ պիտի մարթավարութին էլ սորվի, նստիլ վեկենալ ու քաղաքավարութին: Բան չունի՞ս.. Ձեր էտ թահար բաներու համա մի Հայու շկօլումն իսկի չին ֆիքր անում. աշկերտներուն դրուստ ծուռտերու պէս ունին ձեռներումը բըռնած ու չարչըրումեն ու նահատակում...

Էն մէ հին վարժապետի պէս, էտի էլ խիստ ին ըգընում աշկերտներուն: Աշկերտ վոր է, քու հօր ծուռտը խօմ չէ՞, էտ վո՞ւրղունցի է.. Էն վարժապետի բանը խիստ էրգար պատմութին է, նա էլ հառւ էրէխանցն է սորվեցնում. մէ ըրսի շկօլումը, վո՞ւրդի է, ասում է նա, վունց կարք կայ ու վունց կանոն, պիտիմ, կօսէ, վաղուցվայ պէս զալս ունենամ, վոր գընայ աշկերտը ձէնը կըտրած վէր նըստնի»: Վարժապետը վոր մէ ակլը չը խըփէ իր աշկերտին ու վուտի տակը չըգըցէ ու ածկատրաք չանէ, էլ ի՞նչ վարժապետ է նա»: Մէ հնատի մուշտեկութիլ իմ տեսի էն վարժապետինն ու մէ աշկերտինը շկօլումը, վոր ձիր հանած: Վուտի տակը գըցել աշկերտին ու կոխըրտումէր վարժապետը.. քաղաքավարութին չէ սորվեցնում, բաս ի՞նչ զահրումար է իր գըլխի ու արիւի համա: Մէ գամ էլ ի՞նչ պատմից էն վարժապետը: Թէ, կօսէ, մէ օր մէ բիձ թաղա ձուգն է տալի աղըբլով իր շանը: Չըղնիրը թուրմէ խըլպըլտումին, ու էվէր ին թափում եղնի վըայ. մէկ, էրկու՝ շունը վեր է քաղում ու աղուլին է ածում: Ամա վոր խիստ ղահլէն գընում է, վէր է գընում աղլուխը, ձըղնիրը սատկեցնում է էն շունն ու էնէնց զինջ ու հանդարտ տանում է տուն: Էնէնց էլ ձիր բանն է, կօսէ, աշկերտներուն: Ձիգ էլ պիտի վարժապետը լաւ վէր ջարթէ, թըլացնէ էն շան պէս, վոր մի ղաղըն իմանաք ու ձիգ համա հանդարտ վէր նըստնիք: Վարժապետն իրան շուն շինից, միթամ թէ սիրտը հօցըրուց էտ առակով, էտէնց էլ բան կուլի՞, վարժապետ...

Իսքան էլ փիս բան կուլի՞, ինչոր մի մէջը կայ հիմի.. ի՞նչ անէ մարթ... Մէ բանով դուզիմ խիթարի ձիր օփրտը, վոր էս տարի, կօսէ, էն Էֆէնդիեվի անվըրց աբած փուզերումէն դուս է էկի մի հառւ շկօլի համա ու հարուր թումնի հաէվոր ու ըռսեվար գըրքանք ին տալի աշկերտներու համա: Կու խընդրինք Աստուած, վոր մի հոգեբարցնիրն էն փուղերը օրինաւոր բանեցնին, էնէնց անին, վոր վուչ իրանց անունը կորչի ու վուչ էլ մէր հառւց ազգինը.. էտ փուղը, էտ էլ մարթիք, տեսնինք ի՞նչ բան կու բաշխէք, տեսնինք ի՞նչ կու շինիք, մէ վարսուրդ անինք, խօմ չի՞նք խափվի դուրթ ձիր հոգեբարց ջողելու վախտը: Բանն մէն մալըում կուլի:

Գ.. Տ. Ա.

Երեւանի նահանգի վերայ վիճակագրական տեղեկութիւններ.

Երեւանի վիճակագրական ժողովի հաւաքած տեղեկութիւններին նայելով յիշեալ գաւառի մէջ գտնվում էին 1862ին Ա. Ազնուականներ, նոյնպէս խաներ, բէգեր, Մելիքներ եւ զինուորական աստիճան ունեցող քուրդեր 4276 հոգի՝ իրանց ընտանիքներով ՚ի միասին: Ամուսնացած եկեղեցականներ հայ, յունադաւան եւ մահմետական 4095 հոգի (նոյնպէս իրանց ընտանիքներով ՚ի միասին). կրօնաւորներ 94. զինուորներ 6,142 հոգի. արքունի գեղականներ, որոնք թագաւորական եւ այլ կալուածատէրների երկիրների վերայ բնակում են, 412,004 հոգի:

Բ. Իրանց կրօնի կողմանէ Երեւանի գաւառի բնակիչները բաղկանում են հետեւեալ մասներից.

Հայ	229,335
Մահմետական	182,254
Ուղղափառներ (յունադաւան)	8,426
Կռապաշտ	4,183
Հերձուածողներ (ռուս)	3,329
Հրեայ	50

—

Հայերի թվումն են եւ Հայ քաթոլիկներ, որոնց թիւն է մօտ	3,393
Մահմետականներից Շիա են	156,000
Եւ Սիւննի	25,003

Գ. Քաղաքների մէջ եկեղեցիներ եւ աղօթարաններ են 43. նահանգներումը 630 — ընդամէնը 673: Սրանցից Հայոց եկեղեցի են 446. ուղղափառների (յունադաւանների) են 8. քաթոլիկների 9. մահմետականների մզկիթներ 205 եւ հերձուածողների աղօթարաններ 5:

* * *

Հրատարակիչ Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑ (Ի ՏՊԱՐԱՆԻ Գ. ՄԵԼՔՈՒՄԵԱՆՑ
Խմբագիր Գ. ՍԻՄԵՕՆԵԱՆՑ (Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑ

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ. 10 августа 1863 г.
ТИФЛИСЪ